

3354. 9(47.925)սփ

(անթեր)

Ե Ջ Գ Ե Ս Է Ր




Հ Ե Ս Ո Ր Ե

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱԿՈՎԱՆ, ԲԱՐՈՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՆՈՍԻՐՈՎԱՆ ԴԻՏԵԼԵԱՑ

—000000—

Հ Ե Ս Ո Ր Ե



ՌՍՈՒՄՆ ԱՌՆԷ ԶՄԱՐԻ ԵՐԶԱՆԻԿ




Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կ Ա Լ Կ Ա Թ Ա

1845.

Ա Ջ Պ Ե Ս Է Ր



ՌԻՍՈՒՄ'Ն ԱՌՆԷ ԶՄԱՐԳ ԵՐԶԱՆԻԿ



Օ Ր Ե Պ Ե Ր

Ե Ր Ե Ր Ե Տ Ե Ը Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ը Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն, Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն, Բ Ն Ա Կ Ա Ն, Ե Ի Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն
Կ Ի Տ Ե Լ Ե Ա Տ Ի

ԹԻ- Ի Կ Ա Լ Կ Ա Թ Ա 1845. Ա-4000 16.

Ա Ռ

Պ Ա Տ Ո Ւ Ե Լ Ի Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ջ Պ Ի Ս

Պ Ա Տ Ո Ւ Ե Լ Ի Բ Ի

ՄԻՆ Ժամանակ էր, որ թէ Մադրաս և թէ տեղս մեր ազգային օրագրութիւնք էր հրատարակման, այլ աւանդ որ փոխանակ օր աւուր ծաղկելոյ և աղգաօգու ապողովք զարդարվելոյ, ձիգ Ժամանակ է որ միանգամայն խափանվել է մինչ դեռ այլ Գրիստոնէից մեջ հարիւրապատիկ յաւելանալով զնաման է: Թողունք Ղերօզ և Սմերիկայ, և միայն աստ մեր քաղաքի մեջ մին վերահասութիւն տանք, կտեսնեմք որքան օրական, շաբաթական, և ամսական գրութիւնքան հրատարակման Ինկիզի մեջ. զորս և թէ ոք ցանկանայ կարդալ, ողջոյն օրն չի կարողանալ ամնայն հրատարակութիւնքն վերջ տալ: Նոյն իսկ Բանգալցիք և Պարսիկք (մղուլանին), իւրաքանչիւր իւրեանց լեզուան տեսակ տեսակ օրագրէր ունեն: Քանզի յայտնի տեսմանն որ օրագիրն պիտանի գործ է վասն Սղգի տեսակ տեսակ ուսումնական և բարոյական գիտութեամբք և առեարական ծանօթութեամբք ընդ լայնելով և ծաղկեցուցանելով, զուարճացուցանելով և կրթելով մարդոյս միտքն առ բարին: Ս, յսպիսի ազգաօգու բարութեան Հնդաստանայ կողմարէնքի մեր Պատվելի Սղգի կարօտութիւնն լցուցանելոյ աղաղաւ, ուրախ եմք ծանուցանել որ տեղոյս մեր փոքրիկ հասարակութեանն ընկերութիւն հաստատվեց «Ս. քարատեան Ընկերութիւն» անուամբ: որոյ նպատակն է, այն գրասիրութիւնն որ մեր միջունն կայ աւելի ևս արծարծել. քոջ գիտելով ըստ առածին որ «Ուսումն առնէ զմարդ երջանիկ»:՝

Ս, յս նպատակն յառաջացուցանելոյ համար, շատ հարկաւոր էր մին ապագրաստուն, որոյ միջոցաւ կարողանին դիւրին եղանակաւ այս մեր ցանկութիւնն ի կատար հասուցանել. որ

նոյնպէս ուրախ եմք ծանուցանել հաստատվել է: Սյս տպարանումն կհրատարակվի շաբաթական օրագիր մի քառածալ: որ է մերս Ս.ՉԳՍ.Սէր. յորում բարոյական, բանասիրական և այլ պիտանի և ազգասօգուտ գրութիւնք և թարգմանութիւնք կտպվեն այնպիսի ոճիւ որ դիւրահասկանալի լինի ամենեցուն: որոյ գինն ըստ բաւականին երժան է հաստատվել որ ամենեքեան կարողանան առու: Սյս տպարանի մասին Սրբարտեան Ընկերութիւնն յատկացեալ մի կանոնական դրէլ իւրեանց դաշնագրի միջոցն: որ ամենայն ապագրելի բանէր առանց վերահաստութեան և հրամանի անդամոց ընկերութեանն չտպվեն: Սյս կանոնն հանդերձ մին յատուկ կանոնաւ այս խորհրդեամբան դրվել որ ոչինչ Ս.Ս.Ս.Ս. գրութիւնք այս տպարանի միջոցան դուս չգնն: որ անսիրութիւն ծագեն մեր փոքրիկ հասարակութեան միջոցն: Քանզի որպէս վերն ասացաք: նպատակն է միայն գրասիրութիւն արծարծել մերայնոց միջոցն ուսումնական և զուարճալի գրութեամբք: յորդոր ինելով մերագրի ուսումնասէր Պարնկաց որ իւրեանց պարսպ ժամանակն այսպիսի զուարճալի բաներով անցուցանել. կամ կարգալով այլոց գրածն: և կամ իւրեանք իւրեանց կարողութեան համեմատ գրելով վասն այլոց կարգալոյ: և ՚ի քաջալերութիւն այսն հաստատվելայ որ ամենայն բանասիրական Հայերէն գրութիւնք կամ թարգմանութիւնք զոր մեր ուսումնասէր Պարնիկքն հաճենան ազարկել: ձրիապէս տպվեն սոյն օրագրումն:

Սրտաքոյ այս օրագրոյն նաև զանազան պիտանի դրքէր պիտի տպվեն սոյն տպարանումն յիշեալս ընկերութեան ծախիւքն: որ հաստատվելայ ըստ մարթելոյն երժան գնով վաճառել: որ ամենեցուն կարեոր լինի գնելն. և այս գրքերից մասն ձրի կբաժանվի թէ տեղւոյս և թէ այլ տեղաբնէքի կարօտաւոր մանկանց:

Էստոնք թողած՝ եթէ որոք բանասէր ցանկանայ որոք գիրք կամ գրութիւն տպել սոյն տպարանումն իւր առանձին ծախիւքն: յանձն կանի Ընկերութիւնն Սրբարտեան կատարել զգործն երժան ծախիւք ըստ կարգեալ կանոնաց ծախուց տպագրատան: եթէ գրութիւնն չիցէ ընդ գէմ կանոնաց Սնդամոցն:

Սյսոքիկ ինելով ընկերութեան նպատակ և խորհուրդն, հաւատամք որ ամենայն Սզգասէր հարկաւոր կհամարի սորին հաստատութիւնն. և կջանայ ամենայն իրօք եւրնէ կարեոր օգնութիւնն մատուցանել վասն յառաջադիմութեան սորին: Քանզի ի՞նչ Սզգասէր չի ցանկանալ իւր Սզգին յայլոց ազգաց: եթէ ոչ վերագոյն: գէթ համեմատ տեսնել: Որ ծնող չի ուրախանալ տեսնել իւր խիզանին գրասիրութեան և ուսմի հետեւել: Որ ուսումնական պարծանք անձին չի համարելէջ իւր գիտութիւնն հաղորդել այլում. և կամ միանգամայն ասելով ի՞նչ Տիկին կամ Պարոն չեն յօժարելէջ մին մասն յիւրեանց պարսպ ժամանակիցն զուարճալի պատմութեամբ զբոսեցուցանել: Հաւատամք ամենայն ոք կընդունի որ յայսպիսի բանասիրական պարսպմանց օգուտ ունի ծագել Պատուելի Մերայնոց: որում սրտեռանդն ըղձիւ փառագիւմք: Եւ մի և նոյն ժամանակումն թիլ տուք մեզ խնորհաբար յայտ առնել: զի այսպիսի ծանր լուծ թէ և յուսալով ՚ի խնամս Սրբարչին յանձն առեալ եղև: սակայն ձեր Սզգասէր օգնականութիւնն ևս պիտի: որով լիցուք “Եղբայր յեղբօրէ օգնեալ որպէս զքաղաք ամուր:”

Գործն ազգային է. արդէն միաբանեալ անդամքն ջանացան միայն իւրեանց ծառայութիւնն ցուցանել. ապա միաբան խորհրդով ազգասէր Օգնականաց արժանն անօրինեն և կտրգեն:

Ովբարեհաճի Սրբարտեան Ընկերութեան Սնդամ գրվիլ: Որ և՛ իցէ նպատ տալ: Իւր ծախիւքն Հայերէն և Սնդգէարէն Գրեանք տպել: կամ Օրագրին գրաւորական հանգանակ մատուցանել. և ցանկայ տեղեկանալ իւր հարցն ազարիի առ Մ. Դ. Թաղիզեանց Ա. Տ. Ս. Ընկերութեան թիւ 16. Օրդ 2ինա բազար Գլի:

Առ սյժիմ Գին եղաւ Շաբաթական Սզգասէր Օրագրին

Տարեկան Սփորագրուոյ	32
Վէջ տեւն Սփորագրուոյ	20,
Սնտկան Սփորագրուոյ	4.

Յարգոյ Պալան Ս. Գաւաթանէանն խորհրդոյն ՚ի խոյնէ Ընկերութեան որ սփորագրուիւն և ոյն որոտու և բերել ՚ի Հայն Ընկերութեանն:



Ա Ջ Գ Ա Ս Է Ի

Երբ որդիքն խորայելի չորս հարիւր տարէն յետ աստուածազործ հրաշքներով՝ Մովսէս մարդարէի միջնորդութեամբն Կփայտոսի չարաչար թշուառանքից ազատված հասան կարմիր ծովու մօտ և կարծումին որ անիրաւ փարաւօնից զերծ պիտի մնան յանկարծ աչք բացան և տեսան, զի փարաւօն մօտ հասաւ և զօրք նորա բանակեցան ՚ի թիկանց: Իսբէ՛ որքան սև ու սարսափելի էր նոցա պատահածն, և ի՞նչ պիտի առնէր ողորմելի ժողովուրդն եթէ ոչ մահն աչքովն տեսածի պէս՝ վախենալ: Եւ ո՞վ չի վախենալ, առաջին ասեղ ծովն իբր անդունդ տեսանելով՝ և քամակին արիւնսխանձ թշնամին իւր կառօք և երկվարօք: Ճարակաւր բողոքեցին առ Տէր, և յուսահատ կերպիւ ասացին մովսիսի, այս ի՞նչ արարեր, որ մեզ եգիպտոսէ հանեցեր, եգիպտոսումն մեզ համար գերեզման չպիտի՞ գտանէր, որ բերիւր այսպիսի տեղ մեռանիլ: Մովսիսի սուրբ, ազգասէր և գողտրական սրտի զգացմունքն, որ թէպէտև սուրբ գրքումն չի յիշուած, սակայն յԱմենակալի պատասխանուցն, որ նորա լուռ, և անմուռնչ աղաղակին տալմանսյ, պարզ կհասկացվի: Ի՞նչ

ասէ Տէր ցՄովսէս, զի՞ գոչես առխ, խօսեաց ընդ որդիան խորայելի և չուեսցեն: Պարտ էր իրաւի նախամարդարէին զարմանալով պատասխանել Աստուծոյ, և ասել. Տէր ինչպէ՞ս չգոչեմ, ինչպէ՞ս չգողամ, ինչպէ՞ս աղաղակ չբառնամ, որ այսքան մեծ ժողովուրդ, այսքան պատկառելի ծերունիք, այսքան մատաղորեար մանկունք, այսքան սիրահար փեսայք և այսքան սիրալի հարսուներ, այսքան առոյգ պատանիք, և այսքան փափկասուն կուսանք, հանի բերի յեգիպտոսէ, որ քոյ փրկութիւն և ազատութիւնն վայելեն, և ներ կայ՝ ո՛հ տեսանեմ, աւանդ, որ պիտի ծովակուր լինին կամ թշնամեոյ սրովն կոտորվին:

Խօսեաց ընդ որդիան խորայելի և չուեսցեն: Տէր, առաջոյ բանասմեղ ծովն ասեղ և սարսափելի, և մեր շրջապատն ինուս արիւնարբու թշնամեօք. մահ յաջմէ. մահ ՚ի ձախմէ, մահ յառաջուստ և մահ ՚ի վերջուստ, և մեք չարչարեալ և տառապեալ ժողովուրդ և խաշինք արօտի քոյ ՚ի սպանումն մասնեալ՝ ընդ ո՞ր ճանապարհ փրկութեան չուեսցուք:

Խօսեաց ընդ որդիան խորայելի և չուեսցեն: Տէր միթէ՞ տապան նոյեան կազմեցեր մեզ, կամ նաւք քարկեղոնի կան ՚ի պատրաստի.

ղի չուեսցուք ՚ի նոսա և աղատես-
ցուք զօրդիս և զկանայս մեր յան-
պարտ արեանցն հեղեղաց , յորս
լուղալ գան ՚ի վերայ ամպարտա-
ւանքն եղխպատացոց :

Աստուանց ընդ որդիսն խրայելի
և չուեսցեն : Թէպէտ սուրբ մար-
գարէի սրաի մարմնք և կսկիծն
հաղարապատիկ ևս աւելի լինէր՝
դեռ ևս Ամենակալի միակ Հրա-
մանն էր , չուեսցեն : Արմ վ . այն
աստուածահրաշ զօրութեամբ և
նշանօքն՝ որովք ժողովուրդ ե-
ղխպատոսից մինչ ՚ի տեղն հանեց :
Աստուծոյ մօտ դժար բան չէր
Սովսխիսն ստել , ձեռն քո գաւա-
ղանդ ՚ի վերայ ծովուդ , և պա-
տառիր զդա , և մտցեն որդիքն
խրայելի ընդ մեջ ծովուն ընդ
ցամաք :

Տեսալ՝ իմ նորածին Ազգասէր ,
Թէ ամենակալ Տէրն որպէսայ՞
կարող միշտ իւր սիրելիքն մեծա-
մեծ վտանդից հանել մեր խելքից
դուրս և լեզուից անձառ ողորմու-
թեամբն : Աստուած մի է : Եւ
որպէս մովսխի համար էր , նոյն-
պէս նա և քեզ համար է : Եւ Թէ
կամիս , որ Տէրն ինչպէս նորա ողոր-
մեցաւ , նոյն և քեզ վերայ ցօղի
իւր շնորհք և ողորմութիւնն ,
Զանա ուրեմն մովսխի նման լի՞սիլ :

Նախ քան աղգի մեջ երևիլդ ,
աղգասէր անուամբ պատուեցար ,

շատ լաւ : Աստուած շնորհաւոր
առնէ : Իսոյց Զանա որ քս աղղա-
սիրութիւն մովսխի նման ճշմարիտ
և ազգօգուտ լինի : Տես Թէ ինչ-
պէս՞ նա իւր մին աղգակիցն ան-
գութ եղխպատացու ձեռնից աղա-
տելոյ համար փարաւօնի տան
փառքն ուրացաւ և մին հասարակ
հովիւ դարձաւ : Կու ևս փառք
անուեն , որ մին փութ աւելի չէ ,
երբէք մտքում մի բերեր , այլ
Զանա վայելչական միջոցօք Աստ-
ուածոյ փառքն քո Հայրենեաց
ցոյց տալ , և քո սիրելի Ազգիդ
փառքն համատարած աշխարհի :

Ազգիդ անցեալ մեծ փառաւո-
րութիւնն և ներկայ ցանուցիր և
տատապեալ կացութիւնն այնպէս
համարեն՝ որ մի կողմից ծով , և
միւս կողմից փարաւօն պաշարեալ
պատեալ են զնա , մի աղաղակ բառ-
նար կեղծաւորաց նման ՚ի տեսս
մարդկան՝ որ վարձ չունենաս ,
այլ ճշմարիտ աղգասէր մովսխի
նման քոյ հողւոյ միջիցն գոչիլ ,
անխափան Աստուած կլսի քեզ :
Երբն՝ այսինքն դժուարութիւնն
կպատառի քո առաջին , կալեկապի
միջոցն քեզ հեշտ ճանապարհ
կբանայ :

Մի վախիր մանուկ Ազգասէր ,
քանզի այն աղգն որ դու ուխտել
ես սիրել՝ Աստուածոյ Աղղ և
սեպհական ժողովուրդ է , որպէս

յետոյ պատմելոց եմ քեզ : Որքան
 դու նորա սիրես այնքան ևս Աստուած
 քեզ կսիրի . այն և իւր սիրելի աղբի
 և սեպհական ժողովրդի սիրան՝ որ
 թաքուն իմաստութեամբ իւր
 ձեռնումն ունի իբրև թաս
 կամ ընդանակ անուշից՝ ողորմութեամբ
 կշրջի քեզ վերայ . այնուհետև
 Ազգասէրդ յընդհանուր
 յԱզգէն կսիրվես , կփայփայվիս ,
 կգրկվիս , և մտանալով քոյ
 տարապարտ և աստանդական
 վիճակդ՝ կմտանես քոյ սիրելոյ
 այգին , և պարարութեամբ
 պողոց լիացեալ՝ փառք և գոհութիւն
 կտաս Աստուծոյ , որ քեզ իւր
 սեպհական Ազգին շնորհեց ,
 և սեպհական Ազգն քեզ :
 Վասնորոյ՝ բարեաւ գնաս , և
 շնորհք Տեառն ցողեսցի քե
 վերայ բոլոր Ազգիս Հայոց :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Իմերոյ Ազգային յատուցարէմո-նէան :

Արդէն քանի տարի է որ թուրքաստանայ
 կողմարէնքի մեր Յարգելի եղբարքն
 Ազգասիրական հոգւով վառեալ ,
 անխնջ ջանիւք վաստակման
 Ազգիս յառաջադիմութեան , բարութեան ,
 և պայծառութեան համար . որոյ
 'ի կատարումն ընկերութիւնքան հաստատվել
 'ի կոստանդնուպոլիս , և 'ի Զմիւռնիայ .
 որոց ազգասէր անդամքն հոգւով
 չափ աշխատմանն 'ի փառս Ազգին ,
 ոչինչ խնայելով . ոչ յիւ-

րեանց գոյս , և ոչ իւրեանց անձն անգամ :
 Որոց , նոյնպէս և այլ ամենայն Ազգասէր
 ընկերութեանց հոանդակին սրտիւ
 ցանկամբ հաստատութեան , յաջողութեան
 և կարողութեան 'ի Տեառնէ :
 Ներկայ այսքան կարճատեւ ծանօթութիւն
 տարալ , այսուհետ թէ Տէրն յաջողի
 յաւելի կտամք , այժմ՝ ծանուցանեմք
 որ 'ի Զմիւռնիայ Հայերէն մին Օրագիր
 ևսայ փոյման "Արշարյս Արարատեան
 անուամբ . որոյ խոհական վերատեսուչն՝
 աշխատութիւնն իւր համար
 ղուարձակ զբօսանք համարելով
 աւելացանումայ Ազգի փառքն :
 'ի այն Զմիւռնիայ և այլ պիտանի գրութիւնքին
 ղուս զորման , զորօրինակ "Հայրենասէր"
 և "Շտեմարան Պիտանի
 Գետելեաց" անուանեալքն , այլ չգիտեմք
 արդեօք շարունակմանն թէ ոչ :

Եւ ոչ Յարգելի Աննակեցիք յիտանմնացել
 այսպիսի ազգասիրտ գործքերից .
 որոց 'Բազմավէպն' է իրատակս
 պիտանի և ընտիր գործ , և ուրախ
 կլինեմք թէ շարունակի նոյն կերպիւնդ
 երկար : Սոյն Բազմավիպումն մին
 պատուական ճառ է հրատարակվել 'ի
 վերայ Ազգային Յառաջադիմութեան ,
 որոյ վերայ յաւելի խօսելն անհարկ
 համարեմք . քանզի գրութիւնն ինքնին
 յայանի ցուցանէ հեղինակի ազգասէր
 հոգին : Երանի թէ այսպիսի ազգայորդոր
 ճառեր բազում երկին : Սոյն ճառն՝
 որ գրաբառ է , Արշարյս Արարատեանի
 վերատեսուչն աշխարհաբառ շինելով
 ազգասիրական սրտոք է համարել
 իւր վերայ որ իւր Օրագրի միջոցովն
 հրատարակի : Մեք ևս նոյնպէս հպարտելով
 հարկաւոր դատեցինք՝ որ մեր
 Ազգասիրի միջոցաւն հրատարակելիք
 այս կողմարէնքի մեր պատուելի հաստատութեան
 միջումն , ուստի նոյն

աշխարհաբան տեղոյս աշխարհաբան
շինելով վասն ամենեցուն հասկացողա-
թեան, մասն մասն հրատարակելով
կգնամք մինչ աւարան. միայն յառ-
կապէս խնդրեմք յընթերցողացդ լէվ
մտադրութեամբ կարգէք :

Յատարիճութեան ողբոյն :

ՄԻՆՉԵՒ օրս շատ խնդիրներան
ելել ազգասիրաց ժողովքներէ միջում,
թէ ինչպէս հնար իցէ ողջոյն մին ազգ կը-
թել, որ քաղաքական ու փիլիսոփայա-
կան գիտութեաներից յետ մնացել լինի,
որպէս զի մաքի վերաբերեալ գիտու-
թեամբ հարտանալով մարմնոյ կողմից
ևս երջանիկ կեանք վարի :

Շատոնք հարեանցի մտածութեամբ
կարծեցին թէ մեր ազգն կարողէ այժմ
ևս իւր վերնից ազխտութիւնն դէն
զձի, և իւր գեղեցիկ բարդի լուսովն
երևելի լինի աշխարհիս միջումն : Բայց
ստաւել մին ցանկութիւնէ սրտի, քան
թէ ուղիղ դատողութիւն. վասն զի երբ
որ աչքէրս բարձրացանումամ և վից
դար դէնեամ անց կալման, տեսմանամ
որ մեր պատուական ազգն միշտ ազխտու-
թեան, տառապանաց և աղքատութեան
մէջ շարշարած է : Արքայիկ վարդի
նման անուշահաս սրբոտէղի մէջ և
անուշահամ առունների մօտ անկած :
Ունի վարդենին շառաւիղք, թեք,
ճիւղք, ջիւղք, ծնկներ և ծլէր և ամենայն
կերպով կատարեալ է, այլ ախոս, որ
կանաչելէ և տերև տալէ ժամանակում
մին էլ կտեսնես որ ուրն ուրն կուտղի
կիւրջանայ : Ուտի, ազխտութեան և
զանազան պակասութեամբք գաղանա-
ցած և կատարած որդներիցն : Այսպէս
է ահա ազգիս ներկայէն վիճակն : Արդ՝
կտեսնես որ էպէս մին կերուած և
ապականուած սունկ հետեւել կարող
լինիցջ համար՝ սկեք է ուղի չք

կողմիցն ջուր տալ, վերէն կպած խոտերն
խելել դէն գձել, որդներն սպանել, և
անպէտ ճղկերքն կարել յխտակել, որ
նոյն փչացած սունկն ուժ գտանի և
ճարկի, և բոլոր աշխարհս ճանաչի թէ
այս սունկն շայտտան աշխարհիս
եղեմատիւղ դրախտին մէջ յՆստուծոյ
անկեալ, շատ սրողարեր և բարետեսիլն
է : Այս սուտ թիւնքս առելն ոչ թէ
հեշտ բան է, այլ սկեք է մահն աչքի
յանդիման ջանք անել, մշակել, վաս-
տակել և ճղնիլ : Պէտք է աշխատու-
թիւնն ընդհանուր լինի որ բոլոր ազգն
սկսի ճարկել. վասն որոյ արժանէ յը-
դաքուց էնպէս մին հիմն դնել ազգի
կրթութեան համար, որ եթէ մեք
չկարողանանք, դոնէ մեր որդիքն կամ
մեր թոռներն վայելն բարեկենդանու-
թեան օրեր և ազգասիրացս յիշու-
սակն օրհնեն :

Արդ առանց ազգի սիրտն աղտախրու-
թեան փութով յարդորել վառելոյ,
անհնար է մեծամեծ փոփոխութիւնս
առել ազգի միջումն. և գիտութեան,
արհեստների և քաղականութեան մէջ
բուսաւորել, և առաւել սրտուտոր
նշանց տալ զայն էն Տէրութեանց աչք-
ումն՝ որոց հովանաւորութեան ներքոյ
խաղաղութեամբ սպրմանան, քանդի
մեր ազգն չի կարող զարգանալ ուս-
մանց և արհեստների մէջ մինչև որ
աղքատեր անձինք չշատանան, որք
միամտութեամբ և քաջութեան հողում
ազգի սրոյճառութեան համար ջանան :
Ուտի առաջիկայ ճառս զլուխ զլուխ
կրած անկնք, առաջնոյ մէջ փոքր խօս-
քով նշանց կտանք ինչ կերպով հնարե-
յարդորել զներսն յազգասիրութիւնն :
Երկրորդումն, թէ ինչ ինչան սրտ-
ճառներն որ մինչ և այժմ արդիւ
եղին ազգիս գեղեցիկ յառաջադիմու-
թեանն, և երրորդի միջումն թէ ինչպէս

հնարե արգելքներին յաղթել և թէ
դեղ առերջ ճարն ո՞րն է :



Մասն Ա. Ազգասիրութեան վերայ :

Ի՞մ կարծիքնայ որ չափահաս մար-
դիք և նոքա որ սկսած լինեն իւրեկնց և
աշխարհի օգուտն մտածել, դիւրին է
ազգասիրութեան եռանդով վառվել,
բայց էստոնց կրակն բոցի պէսայ որ
շուտ կլաւովի և կխանչի, որ մին փոքր
քամի փչելով կտրտի կրքնի և տե-
տղանոց աչքն կխարի, և թէ քամին
չարունակ կերպով սաստիկ փչելու-
լինի, նորին փայլունութիւնն կխանչի
և կրկին կմթնի : Նա որ յառաջ ազգա-
սիրութեան կրակով իւր անձն տաքա-
ցած կկարծէր, զինի խանչելէն մին
փոքր տաքութիւն ևս չի ունենայ : Եւ
վախնակ բանն էնայ՝ որ սյապէս
մարդիք ազգասիրութեամբ բորբոք-
վելուց յետ : դժուարին գործոց մէջ
ևս կմտնեն : ոչինչ բան իւրեկնց աչքին
դժուար չի արեալ, կկարծեն թէ
ամենայն բանի կարողան յաղթել, սարեր
վեր դձել, մայրէջքի ուժն կտարել իւ-
րեկնց ուրախութիւն կարեայ, որոյ վասն
երբ որ իւրեկնց եռանդուն կիրքն բոր-
բոքի կորոտան, մեծ մեծ կառեն, աջու-
ձախ վաղ կտան՝ և ամենայն բաների
միանգամայն ձեռ տարով, սկսելն ու-
վելով տալն կուղեն իսկոյն անել, բայց
թէ մին դժուար արգելք յանդիման-
ներն գոյ, և անյաջող ելից հանդիպին
իսկոյն յետ կքաշուեն յուսակաւոր : Եւ
դժուարութենից աչքներն վախեցած
լինելով, մին վախլուի երեխի պէս յետ
կկան իւրեկնց դեղեցիկ յառաջադրու-
թենիցն, և շատ անգամ էնպէս
կլինի որ իւրեկնց և իւրեկնց բնկերներն
մեծ վրաս կպտոճառեն և ամենայն
մին խոր անդունդի մէջ գահավիժելով

կդձեն : Արդ ամենայն բանից յառաջ
հարկաւոր է մին ճար գտանել որ
ազգասիրութեան եռանդն անշեջ միշտ
վառ մնայ մերայնոց սրտումն, սրպէս
զի էնաից գոյացած բարիքն ևս ձիդ
տեւեն : Որոյ վասն անհրաժարելի
հարկամ համարում : — Երրորդն :



Արարին Յարարածոց Նշմարի :

Չարթիւր մի մարդ, զարթիւր ի թմրական քնոյ
մտաց՝ յոր անիայթ և անխի ծուլութեամբ ըն-
կզմեալ կաս : Հայեանց մտադիր ուշով և զննեա
զմեծահարաշ տեսիլ տիեզերաց և բնութեան որ շուրջ
պատին դքե՝ զննեա գնտա և ծանկր դԱրարին
քո : Գննեա և ծանկր գքեզ ինքն, և զննեա գայլ
արարածս ամենայն և ի միտ առ սկիզբն գեղամած
և գրեւր հանդամանս նոցին՝ որք ի զարմանս կրթեն
զամենայն, որ ուշիւ և մտադիւր նկատե և զննե
զգործս Ամենակալին :

Հայեանց և տես դերկինս պէտպէս պայծառ դու՛նով ջ
զարդարեալ, զաստեղան լուսացնոցդ՝ որք հրաշալի
զեղով փայլին : զլուսն զուարճացուցիչ՝ որով նշ-
մարելի լինին երեւելիս ամենայն : և տես զամենայն
զոր մեանգամ տեսանիկ կարեա՝ և լոյցի սիրո քո ապ-
շութեամբ և հիացմամբ : Ուստի՛ են սյապիկ ամե-
նայն, սրպէս զան և սրպէս երթան : Իւ եղևն այտ-
քիկ ամենայն : Ու արար զայս անհուն յարկ երկնից
իբրև գոտաստաղ սքանչելի և զարունակ սքանչե-
լաց : Ու արար զանթիւ լուսաւորան զայնտիկ՝ որ
յանչափի ի հեռաւորութենէ ծագեն ի մեզ զշատա-
ւելոյ իւրեանց : Ու հաստատեաց և եզ գնտա
յանիտիկի կարգի յոր կան և շարժին հրաշալուս :
Ու հրամայեաց Արեգական լուսաւորել զաշխարհ
և բեղմնաւոր առնել զնա : Ուր ձեռն հոգր հաստա-
տեաց զլիւրին ի խորայտաակ հիմունան, և զձագս
նոցս ամբարձ իմերոյ քան զամպս : Ու զարդարեաց
զերկիւր անտառք՝ պողպեր ծառովք, անկովք պի-
տանեօք և զեղաստիլ ծաղկամբք : Ու տայ լոյսիւ
աղբերաց որ արբուցանեն զուարճացուցանեն և
զարարացուցանեն զերկիւր : Ու արար զձոխ
անդնդախորս և զգետս մեծաջուրս ի գիւղութիւն
ամենայն եղելոց, յօգուտ երկրիս, և ի զարձադարձ
շարունակութիւն օրինաց և բարեաց բնութեան :
Ու տայ բուսանել ծաղկանց ի սակաւիկ հոդոյ և
ի ջրոյ այսքան զայնգոյն պայծառութեամբ և
զեղեցկութեամբ և հաստեկտեալ անուշիւք : որով
բերկրեցուցանեն զողես և զուարճացուցանեն : Ու
արար զնշաւորս ամենայն՝ որ լնուն գօգ, զջուր և
զերկիւր : Ու ետ նոցա զկենդանութիւն և զգոլ և
զիմացուած և զգացութիւն՝ որք ապշեցուցանեն
զմիտս մարդոյ : Ու արար զայս ամենայն և զհամբոքն

ընտելեան մեծաճաշ գերեւելի և դանկրեայթ :
 Չարմանք և Հիացուսի կաշնուն դիւ և ապշին
 միայք իմ 'ի գննել զայս ամենայն . և մինչ 'ի մէջ
 այսքան հրաշխաց դարձուցանեմ՝ զխորհուրդ
 մտացս 'ի ներքս յիս 'ի գննել զԱրարն՝ որ իբրև տէր
 և իշխան և միջակեա 'ի յերկրի շուրջ ունի զիւրե-
 ղեակս ամենայն , հիցուցան և սաշու թիւն և զար-
 մանք մեծագոյն տիրեն մտացս , և շարժեն զսիրտ իմ
 'ի խնդրել , ճանաչել , և 'ի պաշտել զԻսակն զերա-
 դոյն զԱրարիչն այս ամենայնի , և իմ իսկ :

Չխարզ 'ի փառոյ Հոռոյ կազմեալ իցէ մարդս 'ի
 մարմին հրաշակերտ և բարեկարգ . որպիսի անխնա-
 նալի եղանակաւ լինի այն , զի մի մասն մարմնոյն
 տեսանէ զաւարկայս որ շուրջ կան զնովաւ , այլ
 մասն մի 'ի ձեռն պեպակս եղանակաւ որութեան օրոյ
 լու գննչմուտն ձայնից , և այլ միւս մի մասն
 բերկրի զուարճալի բուրմամբք անուշից : Ուստի
 իցէ այն չքնաղ ծիր հաղորդելոյ նմանեացս զբան
 և զխորհուրդս մտաց , և զցանկութիւնս սրտից
 փոխադարձ իմացմամբ և հասկացութեամբ : Եւ
 զի՛նչ այն մեծագոյն բարին պատուական , այն պար-
 զե աննման , այն դանձ անգին , զհանակամութիւն
 ստեմ , որ է մի միայն որոշիչ , զարդ անհամեմատ ,
 որ տայ մարդոյս խորհիլ զամենայն արարածոց , և
 հասաւ լինել անճամար զիտութեանց և արհեստից .
 և համառօտիւ ասացից , որ միայն առնէ զմարդն
 Մարդ , իբրև զարդ մի երկրի :

Այսպիսի են ո՛վ մարդ , և անթիւ և անճառելի
 արարածքս ամենայն տիեզերաց որք կան հանդէպ
 մտացոյ 'ի տեսանել զննել և խորհել : Եւ ճնար
 ինչ իցէ արդեօք 'ի տես այսքանեաց և այսպիսեաց
 հրաշխաց ընտելեան ո՛չ ճանաչել զամենազօր
 և զամենակալ ձեռն ամենարարի Արարչին . պա՛մ
 մարթ ինչ իցէ արդեօք ո՛չ ճանաչել և խոստովա-
 նել առ նին , զի անհուն իմաստութիւն՝ կարո-
 դութիւն և բարութիւն նորա միայն և համակ
 բերին 'ի յառնել զմարդն երջանիկ :

Այն Ատուած իմ , հօջր և իմաստուն բան քոյ
 արար զամենայն , և ետ նոցա զգոյութիւն զշար-
 ժուսն և զիւնան . Ամենայն որ ինչ է . 'ի քէն է :
 Չեռն քո արար զայս անթիւ բազմութիւն հրա-
 շախաց , և ես խնարհեալ երկիր պազանեմ ձեռն
 քում հիացմամբ՝ երախտագիտութեամբ և սիրով :
 Ո՛վ անճատանելի կարողութեան քում Տէր , որ յո-
 չնչէ արարեր զայս ամենայն . Ո՛վ անհուն բա-
 բերարութեան քում , որ կարգեցեր զայս ամենայն
 վասն երջանկութեան մարդոյն . մեծ և սքան-
 չիկ ես Տէր Ատուած իմ յաւիտեական : Եր-
 կիրս այս պատմէ զմեծօրայելութիւն քո , և երկինք
 են աթոռ փառաց քոց : Երկնցին՝ ասացեր նոցա ,
 և 'ի նոյն արարածեցան 'ի վայրն անհուն :

Ամբողջ հնչեն զգովութիւն քո և 'ի թեւս
 փայլատականց ճեմես անեղ ճոխութեամբ : Աըշ-
 մարեալ երեւիս 'ի ճառադայթս արեգական , և
 'ի ծաղիկս իսկ քնքշազարդ երեւի մասն քո . Ո՛վ է
 Ատուած նման քեզ՝ որ շրջիս 'ի վերայ Հոռոց ,
 որ ունիս զշանթս 'ի ձեռնին , և հրամայես փայ-

լատականց լուսաւորել զաշխարհ . բիւրաւոր
 զուեաք լուսաւորաց պատմեն զմեծութիւն քո ,
 զի դու զյայացուցեր զնոս : Տիեզերքս այս և
 սաճար փառաց քոց կառուցեալ , և անդ լինի
 հռչակք զովութեանց քոց , և բիւրք բիւրոց հը-
 բեշտակաց ամբառնան առ քեզ զերդս օրհնու-
 թեանց , և պաշտեն զքեզ երկիւրիւ :

Սիւեալ 'ի Սերովբէն՝ որ տեսնէ գերեսս քո .
 մինչ և յեակն շնչեն՝ որ շարժի յերկրի , ամենբեան
 պատմեն զիտաս քո . և արարածք ամենայն որ կան
 այժմ , և որք դեռ չեն եղեալ՝ կախեալ կան
 'ի քում մէ իշխանութենէ :

Ո՛վ է մարդ՝ զի այսքան սիրով Հօգաս զնմանէ ,
 և կարգեալ ունիս դեա յատիճան երեւելի :
 Բնակիչք ծովու և օրոյ , անտառաց և դաշտաց են
 'ի ներքոյ իշխանութեան նորա , և արարածք
 ամենայն ճանաչեն դեա յերկրի՝ իշխան իւրեանց
 և տէր :

Ո՛վ մարդ՝ առաջին պարտիք քո են և լիցին
 միշտ ինդրել զԱտուած 'ի գործս նորա : Այոյ՛ք
 ինչ յերկինս 'ի վեր , կամ յերկիր 'ի խոնարհ , որ ո՛չ
 առաջնորդէ և տանի զմեզ առ նա , կամ որ ո՛չ
 յուշ առնէ մեզ զկարողութիւն՝ զիմաստութիւն
 և զբարութիւն նորա : Ընէ մարթ բարեգոյն ևս
 անցուցանել զաւուրս կենաց քան անպաղար ամբառ-
 նալ զաշ 'ի սիրալիլ Հայրն ընտելեանս որ յամենայն
 ժամ բանալ զառստ ձեռն իւր 'ի լուս զարարածս
 բարեօք իւրովք : Տուր ինձ Տէր իմ Ատուած
 յամենայն ժամ արժանաւորապէս օրհնել զանու-
 ստք քո յնծութեամբ և երախտագիտութեամբ ,
 և մեծացուցանել զիտաս իմաստութեան և կարո-
 դութեան քո , և պատմել զբարութիւն քո ամենայն
 մարդկան :

◆◆◆
Խնդիր :

Ամեն ուսումնական և սոցառէր Պարնիք , մանա-
 ւանդ մեր Մարդասիրական , և Չուրու Ամենա-
 փրկչեան , Հոգեորական , և Հայկական Հայրենասի-
 բական ճեմարանաց աշակերպքն կյորդորվին աւել
 իւրեկց քաջալիբութեանց համար՝ որ ոք լուր . շա-
 բաղութիւն , կամ թարգմանութիւն ուղարկել՝ որ
 հրատարակվին Ազգասիրիս միջոցան :

Եթէ որ ոք անձն կամենայ առանձին բան տպել
 տալ , իւրաքանչիւր տողին պիտի տայ՝ 2. Անայ :
 Տարեկան Սոցառութեան 32. Ռոսի :
 Աւել ամեն Սոցառութեան 20. 77
 Անուան Սոցառութեան 4. 77